# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ղեկավարի 29.01.2018 թվականի թիվ 4,5 և 6 որոշումները:

Առդիր 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2018 թվականի N 4

### ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 22.01.2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով Ջրաշեն համայնքի ղեկավարը որոշում է.

Անվավեր ճանաչել Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ղեկավարի 22.01.2018 թվականի «Ջրաշեն համայնքում 06-095-0095-0003 ծածկագրի տակ գտնվող բնակելի տան, օժանդակ շինության և հողամասի նկատմամբ հողհատկացման հիմքերը վերականգնելու և սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 3 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29 » հունվարի 2018 թվականի N 5

### ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 06-095-0095-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, <Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ջրաշեն համայնքում 06-095-0095-0003 ծածկագրի տակ գտնվող ժառանգության իրավունքով ձեռք բերած 0.30581 հա հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Արշալույս և Մարատ Մխիթարյանների բաժնային սեփականության իրավունքը:

2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտի օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:

3.Վերականգնել և ճանաչել ժառանգության իրավունքով ձեռք բերած 0.30581 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1937-1991թթ կառուցված 262.62քմ բնակելի տան, 11.80քմ բաց պատշգամբի, 13.23քմ աստիճանահարթակի և 89.84քմ անասնագոմի նկատմամբ Արշալույս և Մարատ Մխիթարյանների բաժնային սեփականության իրավունքը:

4.Բնակելի տան 4.54քմ հատվածը, որը կառուցվել է 2017թ թողել որպես ինքնակամ:

5.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Անշարժ գույքերին տրամադրել փոստային հասցե 10 փողոց թիվ 45:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 29 » հունվարի 2018 թվականի N 6

ԱՐՇԱԼՈՒՅՍ ԵՎ ՄԱՐԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ, ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրաշեն համայնքի բնակիչ հանգուցյալ Աթաբեկ Աղաբեկի Մխիթարյանին 0201-0034 ծածկագրի տակ սեփականաշնորհվել է 0.41 հա, իսկ 0261-0015 ծածկագրի տակ՝ 0.4 հա վարելահողեր, որոնք 10.02.2010 թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով փոխանցվել է Արշալույս և Մարատ Մխիթարյաններին, սակայն չափագրման արդյունքում պարզվել է; որ հողամասերի փաստացի չափը կազմում է 0.40698 հա և 0.4025 հա, այսինքն ինքնակամ զբաղեցված է 0.00698 հա և 0.0025 հա:

Նկատի ունենալով, որ տվյալ հողամասերը նախատեսված չեն նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, չեն ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների անվտանգության և սպասարկման գոտում, չեն խոչընդոտում այլ հողամասերի նպատակային և գործառնական նշանակության օգտագործմանը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, ընդգրկված չեն հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ գործող հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով հողերի սահմանների վերաբերյալ կազմված հատակագծերը

ՈՐՈՇԵՑԻ

1.Օրենքի ուժով վերականգնել և ճանաչել Արշալույս և Մարատ Մխիթարյանների սեփականության իրավունքը ժառանգությամբ փոխանցված, փաստացի օգտագործվող 0201-0034 և 0261-0015 ծածկագրերի տակ գտնվող 0.40698 հա և 0.4025 հա վարելահողերի նկատմամբ:

2.Հողամասերի սահմանները որոշվում է համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ